Հրատարակված է Օգոստոս 21, 2007 , Ազգ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑ «Ս. ՍԱՀԱԿ -Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ

Օգոստոսի 18-ին Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ կաթողիկոսը «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշան հանձնեց Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ, դոկտոր Հարություն Արմենյանին՝ գիտամանկավարժական եւ հասարակական բեղուն գործունեության համար: Վեհափառ հայրապետը Հարություն Արմենյանին տված կոնդակում բարձր է գնահատել նրա տասնամյակներ շարունակ անխոնջ նվիրումով ծառայությունը՝ առողջապահության բնագավառում: «Բազում անգամներ մենք առիթ ունեցել ենք նաեւ դրսեւորված տեսնել Առաքելական մեր Սուրբ եկեղեցու եւ Մայր աթոռ սուրբ Էջմիածնի հանդեպ Ձեր սերն ու անխախտ հավատարմությունը, որը կրում եք Ձեր հոգում՝ իբրեւ արժանի զավակ լիբանանահայ համայնքի», ասված է կոնդակում:

Հարություն Արմենյանը իր շնորհակալական խոսքում նշեց. «Այս շքանշանը չափազանց մեծ պատիվ է ինձ համար, բայց այս պարգեւը կիսում եմ բոլոր նրանց հետ, որոնց հոգատարությունն ու խնամքը տեսել ու շարունակում են տեսնել տարբեր աշխարհագրությունների ու ժամանակների ընթացքում»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

http://www.armtown.com/news/am/azg/20070821/2007082119/